18966

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՈԳՆՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՄՈՊՐ), ԽՍՀՄ ՍԵԿՑԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՐԵՎԱՆ ○ 1937

327.3
Г-90

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

27 SEP 2006
15 JAN 2010
327.3
Մ - 90

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՄՕՊՐ) ԽՍՀՄ ՍԵԿՑԻԱ

(Հիմնականում հավանություն ե տրված ԽՍՀՄ ՄՕՊՐ-ի Կենտկոմի 6-րդ պլենումի կողմից 1937 թ. հունիսի 25-ին)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՄՕՊՐ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՐԵՎԱՆ ● 1937 Թ.

04 JUL 2013

18966

4781
39

**ПРОЕКТ УСТАВА**

**Международной Организации Помощи Борцам Революции (МОПР), Секция СССР**

Издание ЦК МОПР Арм. ССР, Ереван, 1937

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄՈՊՐ-Ի ԲՈԼՈՐ ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ, ՔԱՂԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԲՋԻՋՆԵՐԻՆ, ՄՈՊՐ-Ի ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

### ԹԱՆԳԱԳԻ՛Ն ԸՆԿԵՐՆԵՐ,

*ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կանոնադրության նախագիծը, վորին հիմնականում հավանություն է տվել ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի VI պլենումը, նույնպես և կանոնադրության նախագծին արված փոփոխությունները անհրաժեշտ է լայնորեն քննարկել ՄՈՊՐ-ի ակտիվի խորհրդակցություններում և անդամների ժողովներում ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր բջիջում:*

*ՄՈՊՐ-ի կանոնադրության նախագծին արված այն բոլոր առաջարկներն ու դիտողությունները, վորոնք յելնում են ՄՈՊՐ-ի անդամների ժողովներից, ակտիվից կամ ՄՈՊՐ-ի առանձին անդամներից, պետք է խնամքով գրի առնվեն և ուղարկվեն Հայկական ԽՍՀ ՄՈՊՐ-ի Կենտկոմին՝ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմին կից կանոնադրական հանձնաժողովին ուղարկելու համար:*

*ՄՈՊՐ-ի կանոնադրության նախագծի քննարկումը ՄՈՊՐ-ի անդամների կողմից՝ պետք է նպաստի ամբողջ ինտերնացիոնալ-մասսայական աշխատանքը բարձրացնելուն, ՄՈՊՐ-ի շարքերը մեծացնելուն և ֆինանսական պլանը ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի VI պլենումի պահանջներին համապատասխան լրիվին կատարելուն:*

ՄՈՊՐ-ական վողջույններով՝
Հայկական ԽՍՀ ՄՈՊՐ-ի Կենտկոմի նախագահ՝ Ա Դ Ո Ն Ց

ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ՏՐՎԱԾ
ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ 6-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ
1937 ԹՎԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**Հեղափոխության Մարտիկներին Օգնող Միջազգային Կազմակերպության (ՄՕՊՐ), ԽՍՀՄ սեկցիա**

## I. ՆՊԱՏԱԿՆԵՐ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը հանդիսանալով հեղափոխության մարտիկներին օգնող միջազգային կազմակերպության սեկցիա, իր առաջ խնդիր ե դնում՝

ա) բարոյական և նյութական օգնություն ցույց տալ սպիտակ տեռորի բոլոր զոհերին, բոլոր նրանց, ովքեր վնասվել են կապիտալիստական և գաղութային յերկիրների աշխատավորների ազատագրության համար, բոլոր նրանց, ովքեր պայքարում են ֆաշիզմի և ռեակցիայի դեմ, ազգային ճնշման դեմ, հանուն դեմոկրատիայի, հանուն խաղաղության, հանուն սոցիալիզմի.

բ) անմիջական աջակցություն ցույց տալ քաղաքական եմիգրանտներին և աշխատավորների ազատության համար բոլոր պայքարողներին, նրանց ընտանիքներին ու յերեխաներին, վորոնք ԽՍՀՄ-ում ապաստանի իրավունք են ստացել.

գ) Խորհրդային Միության աշխատավորներին դաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բոլոր յերկիրների պրոլետարների յեղբայրական դաշինքի վոգով, ամրապնդելով ԽՍՀՄ աշխատավորների համերաշխությունը կապիտալի յերկիրների և գաղութների աշխատավորների հետ—ֆաշիզմի և իմպերիալիզմի ճնշման դեմ նրանց մղած ազատագրական պայքարում:

2. Իրականացնելով իր ինտերնացիոնալ խնդիրները, ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը Խորհրդային Միության բոլոր հասարակական կազմակերպությունների հետ միասին ակտիվորեն մասնակցում ե սոցիալիզմի շինարարությանը, ամրապնդելով Խորհուրդների յերկրի—ամբողջ աշխարհի պրոլետարների և ճնշված ժողովուրդների հայրենիքի—հզորությունը:

3. Վերը հիշված խնդիրներն իրագործելու համար ԽՍՀՄ

ՄՈՊՐ-ն աշխատավորներին ներգրավում է ՄՈՊՐ-ի շարքերը, ստեղծում է իր կազմակերպությունները, ՄՈՊՐ-ի գաղափարները բացատրելու ագիտացիա և պրոպագանդա յե մղում, միջոցներ է հավաքում սպիտակ տեռորի զոհերին օգնելու համար, կազմակերպում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կազմակերպությունների շեֆությունը կապիտալիստական բանտերի քաղաքական բանտարկյալների վրա:

4. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ն իր գործունեյությունն իրականացնում է Խորհրդային Միության կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ կոնտակտ պահելով:

## 2. ՄՈՊՐ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. ՄՈՊՐ-ի անդամ կարող է լինել Խորհրդային Միության 15 տարեկան դարձած յուրաքանչյուր քաղաքացի, վորը յենթարկվում է կանոնադրությանը, գտնվում է կազմակերպություններից մեկում և անդամավճար է տալիս:

Այն անձերը, վորոնք դատարանով զրկված են ընտրական իրավունքից, ՄՈՊՐ-ի անդամ լինել չեն կարող:

6. ՄՈՊՐ-ի անդամի ընդունելությունը կատարվում է բացառապես անհատական և կամավոր կարգով:

Ծանոթություն.— Կոլեկտիվ անդամություն, այսինքն ՄՈՊՐ-ի մեջ խմբերով կամ կոլեկտիվներով մտնելը չի թույլատրվում:

7. ՄՈՊՐ-ի շարքերը մտնելու համար բավական է ցանկացողի անձնական հայտարարությունը. անդամագրում է բջիջի բյուրոն, բջիջի ընդհանուր ժողովի հետագա հաստատումով:

Բջիջները պարտավոր են ՄՈՊՐ-ի անդամությունը ձևակերպել անդամագրքույկ տալու միջոցով:

8. ՄՈՊՐ-ի անդամները մեկ կազմակերպությունից մյուսն անցնելիս վերջինիս կազմի մեջ մտցվում են անդամագրքույկը ներկայացնելով:

9. ՄՈՊՐ-ի անդամները պարտավոր են՝

ա) վճարել մուտքի վճար և անդամավճար այն չափով և այն ժամկետներին, վոր սահմանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը.

բ) ակտիվորեն մասնակցել կազմակերպության աշխատանքին.

գ) պարզաբանել ՄՈՊՐ-ի գաղափարներն ու խնդիրները.



դ) աջակցել նոր անդամների ներգրավմանը.

ե) խնամքով պահել անդամատոմսը, վորպես Հեղափոխության Մարտիկներին Օգնող Միջազգային Կազմակերպությանը (ՄՈՊՐ-ին) պատկանելու վկայագիր:

10. ՄՈՊՐ-ի անդամությունից վտարում կատարում է բջիջի ընդհանուր ժողովը՝

ա) կանոնադրությունը խախտելու համար.

բ) դատարանի վճռով ընտրական իրավունքից զրկվելու դեպքում.

գ) այն արարմունքների համար, վորոնք արատավորում են նրան, վորպես ՄՈՊՐ-ի անդամի:

Ծանոթություն.—Վտարվածն իրավունք ունի բջիջի ընդհանուր ժողովի վորոշումը բողոքարկելու ՄՈՊՐ-ի վերադաս կոմիտեյին:

## 3. ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կազմակերպության կառուցվածքի ղեկավար սկզբունք հանդիսանում է դեմոկրատական ցենտրալիզմը: Այդ նշանակում է՝

ա) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բոլոր ղեկավար օրգանների, այսինքն՝ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական կոմիտեյի, յերկրային, մարզային և հանրապետական կոմիտեների, օկրուգային, քաղաքային և շրջանային կոմիտեների, ՄՈՊՐ-ի բջիջների բյուրոների և համապատասխան վերստուգիչ հանձնաժողովների ընտրականություն վերևից մինչև ներքև.

բ) ՄՈՊՐ-ի կոմիտեների և բջիջների բյուրոների պարբերական հաշվետվություն իրենց ընտրողների—ՄՈՊՐ-ի անդամների առաջ.

գ) հասարակական կարգապահության պահպանում և փոքրամասնության յենթարկում մեծամասնությանը.

դ) ՄՈՊՐ-ի բարձրագույն ղեկավար օրգանների վորոշումների պարտադրականություն ստորադաս օրգանների և կազմակերպության բոլոր անդամների համար:

12. ՄՈՊՐ-ի կազմակերպությունները վերևից մինչև ներքև

պարտավոր են խստորեն և անշեղորեն պահպանել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, թույլ չտալով վոչ մի խախտում և շեղում:

## 4. ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԸ

### Ա) ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

13. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բարձրագույն որգանը Համամիութենական համագումարն է: Հերթական համագումարները հրավիրվում են յերեք տարին մեկ անգամ:

Արտակարգ համագումար հրավիրում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ այն կազմակերպությունների մեկ յերրորդի պահանջով, վորոնք ներկայացված են յեղել վերջին համագումարում: Արտակարգ համագումարը հրավիրվում է նրա հրավիրման վերաբերյալ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի վորոշման օրվանից կամ նրա հրավիրման մասին Կենտկոմի՝ պահանջ ստանալու օրից սկսած յերկու ամսվա ժամկետում:

Համագումարը հրավիրելու ժամանակը, ներկայացուցչության նորման և օրակարգը վորոշվում են Կենտրոնական Կոմիտեյի կողմից և վաղորոք հրապարակվում են ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի պաշտոնական հրատարակություններում:

14. Համագումարը վավերական է համարվում պատգամավորների սահմանված կազմի առնվազն 75 տոկոսի ներկայության դեպքում:

15. Համամիութենական համագումարի վարմանը յենթակա յեն՝

ա) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի և Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների քննարկումն ու հաստատումը.

բ) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի գործունեությունից բղխող բոլոր հարցերի քննարկումն ու լուծումը.

գ) կանոնադրության փոփոխումն ու լրացումը.

դ) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի, Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի, ինչպես և ՄՈՊՐ-ի Միջազգային կոնգրեսների պատգամավորների ընտրությունները:



### Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

16. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն ընտրվում է Համամիութենական համագումարի կողմից այն քանակով, վոր վորոշում է համագումարը, և հերթական Համամիութենական մեկ համագումարից մինչև մյուսն ընկած ժամանակամիջոցում հանդիսանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բարձրագույն որգանը:

ՄՈՊՐ-ի Կենտկոմի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարի ընտրած թեկնածուների թվից:

Ծանոթություն.—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը միաժամանակ հանդիսանում է ՌԽՖՍՀ ՄՈՊՐ-ի Կենտկոմ:

17. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն կատարում է Համամիութենական համագումարների, ՄՈՊՐ-ի վերադաս միջազգային որգանների վորոշումները, ուրիշ կազմակերպությունների և հիմնարկների հետ հարաբերություններ պահպանելիս հանդիսանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ներկայացուցիչը, անմիջականորեն ղեկավարում է միութենական հանրապետությունների ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեների, մարզային, յերկրային կոմիտեների աշխատանքը, կազմակերպում է իր հրատարակչությունը՝ ժուռնալներ, թերթեր, գրքեր և ՄՈՊՐ-ի աշխատանքին վերաբերող հարցերի մասին զանազան նյութեր լույս ընծայելու համար: Իր գործունեության ընթացքում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը հաշվետվություն է տալիս ՄՈՊՐ-ի Համամիութենական համագումարին և Գործկոմին:

18. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի պլենումները հրավիրվում են առնվազն վեց ամիսը մեկ անգամ:

Կենտկոմի անդամության թեկնածուները Կենտկոմի պլենումների նիստերին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով:

19. Կենտրոնական Կոմիտեյի պլենումը Կենտկոմի մեկ պլենումից մինչև մյուսը կազմակերպության ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար իր կողմից ընտրում է նախագահություն, ինչպես նաև նախագահ, նրան տեղակալ և քարտուղար, և հաստատում է նախագահության և քարտուղարության աշխատանքի վերաբերյալ կանոնադրությունը:

Պլենումը վավերական է համարվում պլենումի կազմի առնվազն յերկու յերրորդի ներկայության դեպքում:

20· Կազմակերպական և գործադիր բնույթի ընթացիկ աշխատանք կատարելու համար Կենտկոմի պլենումը ընտրում է իր կազմից քարտուղարություն։

21· ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմն օգտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներով։

22· ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմն իր պարտավորությունների համար պատասխանատու յե իր գույքով։

23· Ամեն տեսակ պայմանագրեր, պարտավորություններ, չեկեր և լիազորագրեր ստորագրում է նախագահը կամ նրա տեղակալը և կամ քարտուղարը, առանց այդ առթիվ հատուկ լիազորագիր ունենալու, կամ թե ստորագրում են ուրիշ անձեր՝ նախագահության լիազորությամբ։

24· ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմն ունի իր կնիքը։

## Գ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

25· Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Համամիութենական համագումարի կողմից այն քանակով, վոր սահմանում է համագումարը։

Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարի ընտրած թեկնածուների թվից։

26· Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է թե՛ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի և թե՛ նրա իրավասության տակ գտնվող հիմնարկների և ձեռնարկությունների գործունեությունը, վերահսկողության է յենթարկում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի ֆինանսական աշխատանքը և հաշվետվությունը, մասնավորապես ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմին կից գտնվող հրատարակչության գործունեությունը։

27· Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե համագումարի առաջ և աշխատում է ինքնուրույն, հավաքվելով իր հայեցողությամբ նշանակված ժամկետներին, բայց վոչ ուշ, քան ամսական մեկ անգամ։

28· Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա յեն գտնվում Կենտկոմի պլենումին և նախագահության նիստերին։



## 5. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՊՐ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29· ՄՈՊՐ-ի միութենական հանրապետական կազմակերպության բարձրագույն օրգանը հանդիսանում է ՄՈՊՐ-ի հանրապետական համագումարը, իսկ համագումարից մինչև համագումար յեղած ժամանակամիջոցում—Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմը։

30· Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի հերթական համագումարը հրավիրվում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմի կողմից՝ մեկ և կես տարին մեկ անգամ։

Արտակարգ համագումարը հրավիրվում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի կողմից՝ նրա սեփական նախաձեռնությամբ կամ այն կազմակերպությունների $^1/_3$-ի պահանջով, վորոնք ներկայացված են յեղել Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի վերջին համագումարում։ Արտակարգ համագումարը հրավիրվում է նրա հրավիրման վերաբերյալ Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմի վորոշման օրից կամ նրա հրավիրման մասին Կենտկոմում պահանջ ստացվելու օրվանից սկսած յերկու ամիս ժամկետում։

Համագումարում ներկայացուցչության նորման սահմանում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմը։

Համագումարը լսում և հաստատում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումները, քննարկում է հանրապետության մեջ ՄՈՊՐ-ի կատարած աշխատանքի հարցերը, ընտրում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմ, վերստուգիչ հանձնաժողով և ՄՈՊՐ-ի Համամիութենական համագումարի պատգամավորներ։

31· Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմն ընթացիկ աշխատանքի համար ընտրում է նախագահություն, ինչպես նաև նախագահ, նրան տեղակալ և քարտուղար։

Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարում ընտրված թեկնածուների թվից։

32· Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմը ղեկավարում է ՄՈՊՐ-ի ստորադաս կազմակերպությունների աշխատանքը, այլ կազմակերպությունների և հիմնարկությունների հետ

իր հարաբերություններում հանդիսանում է ՄՈՊՐ-ի կազմակերպության ներկայացուցիչ, նշանակում է հանրապետական օրգանի խմբագրություն, կազմակերպում է ՄՈՊՐ-ի գրականության հրատարակումը ազգային լեզուներով, իր կազմակերպության սահմաններում բաշխում է ֆինանսական պլանը և միջոցները:

33. Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմի պլենումները հրավիրվում են ոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ:

34. Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմն օգտվում է իրավաբանական անձի իրավունքներով և ունի իր կնիքը:

ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը պատասխանատվություն չի կրում միութենական հանրապետությունների ՄՈՊՐ-ի կենտկոմների պարտավորությունների համար:

35. Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի համագումարում՝ անդամների նրա կողմից վորոշված թվով:

Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե Միութենական հանրապետության համագումարին և ԽՍՀ Միության ՄՈՊՐ-ի Կենտկոմին:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամների հեռանալու դեպքում նրանց կազմը լրացվում է համագումարի կողմից ընտրված թեկնածուների թվից:

36. Վերստուգիչ հանձնաժողովն առնվազն յերկու ամիսը մեկ անգամ ստուգում է Կենտրոնական Կոմիտեյի գործունեյությունը, վերահսկողության է յենթարկում կազմակերպությունների ֆինանսական աշխատանքը, հաշվետվությունը և հսկում է հաշվետվության բոլոր տեսակները ճիշտ վարելու վրա:

Վերստուգիչ հանձնաժողովն իր ստուգման արձանագրությունները հանձնում է Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյին, նկատված թերությունները վերացնելու համար, և պատճենները ներկայացնում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմին:

37. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա յեն լինում Միութենական հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի պլենումի և նախագահության նիստերին:



## 6. ՄՈՊՐ-Ի ՅԵՐԿՐԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՊՐ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. ՄՈՊՐ-ի յերկրային ու մարզային կազմակերպության բարձրագույն օրգանը հանդիսանում է յերկրային, մարզային կոնֆերանսը, իսկ կոնֆերանսից մինչև կոնֆերանս յեղած ժամանակամիջոցում—յերկրային, մարզային կոմիտեն:

39. Յերկրային, մարզային կոմիտեն հերթական յերկրային, մարզային կոնֆերանս հրավիրում է մեկ և կես տարին մեկ անգամ:

ՄՈՊՐ-ի յերկրային, մարզային կոմիտեն յերկրային, մարզային արտակարգ կոնֆերանս հրավիրում է սեփական նախաձեռնությամբ կամ օկրուգային, քաղաքային, շրջանային այն կազմակերպությունների մեկ յերրորդի պահանջով, վորոնք ներկայացված են յեղել ՄՈՊՐ-ի վերջին յերկրային, մարզային կոնֆերանսում: Յերկրային, մարզային արտակարգ կոնֆերանսը հրավիրվում է արտակարգ կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ ՄՈՊՐ-ի յերկրային, մարզային կոմիտեյի վորոշման օրվանից կամ նրա հրավիրման վերաբերյալ յերկրային, մարզային կոմիտեյում պահանջ ստացվելու օրվանից սկսած յերկու ամսվա ժամկետում:

Յերկրային, մարզային կոնֆերանսի ներկայացուցչության նորման սահմանում է ՄՈՊՐ-ի յերկրային, մարզային կոմիտեն:

Յերկրային, մարզային կոնֆերանսը լսում և հաստատում է յերկրային, մարզային կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումները, քննարկում է յերկրամասում, մարզում և հանրապետության մեջ ՄՈՊՐ-ի կատարած աշխատանքի հարցերը, ընտրում է յերկրային, մարզային կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և ՄՈՊՐ-ի Համամիութենական համագումարի ու միութենական հանրապետության համագումարի պատգամավորներ:

40. Յերկրային, մարզային կոմիտեն ընթացիկ աշխատանքի համար ընտրում է նախագահություն, ինչպես նաև նախագահ, նրա տեղակալ և քարտուղար:

ղեկավարում է ՄՈՊՐ-ի բջիջները, վարում է կազմակերպության հաշվառքը, օկրուգի, քաղաքի, շրջանի ՄՈՊՐ-ի անդամներին կանոնավոր կերպով ինֆորմացիա է տալիս իր աշխատանքի մասին և հանդիսանում է կազմակերպության ներկայացուցիչը այլ հիմնարկությունների հետ հարաբերությունների պահպանելիս:

Օկրուգային, քաղաքային, շրջանային կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում նրանց կազմը լրացվում է օկրուգային, քաղաքային, շրջանային կոնֆերանսի ընտրած թեկնածուների թվից:

ՄՈՊՐ-ի օկրուգային, քաղաքային, շրջանային կոմիտեն ՄՈՊՐ-ի մարզային, յերկրային կոմիտեյին, Միութենական Հանրապետության ՄՈՊՐ-ի Կենտկոմին ներկայացնում է հաշվետվություն իր գործունեյության մասին, այն ժամկետներում և այն ձևով, վորոնք սահմանվում են ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի կողմից:

50. ՄՈՊՐԻ օկրուգային, քաղաքային, շրջանային կոմիտեյի պլենումը հրավիրվում է առնվազն յերկու ամիսը մեկ անգամ:

51. ՄՈՊՐ-ի օկրուգային, քաղաքային, շրջանային կոմիտեն ունի իր կնիքը:

52. Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է ՄՈՊՐ-ի օկրուգային, քաղաքային, շրջանային կոնֆերանսում՝ անդամների նրա կողմից վորոշված թվով:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է կոնֆերանսի ընտրած թեկնածուների թվից:

Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե ՄՈՊՐ-ի օկրուգային, քաղաքային, շրջանային կոնֆերանսին և իր յերկրային, մարզային կոմիտեյին և Միութենական Հանրապետության Կենտրոնական Կոմիտեյին:

53. Վերստուգիչ հանձնաժողովը առնվազն ամիսը մեկ անգամ ստուգում է համապատասխան կոմիտեյի գործունեյությունը, վերահսկողության է յենթարկում նրա ֆինանսական աշխատանքը և հաշվետվությունը: Վերստուգիչ հանձնաժողովն իր ստուգման և վերահսկողության արձանագրությունները ներկայացնում է կոմիտեյի նախագահության և միաժամանակ ուղարկում է այդ արձանագրությունները յերկրային, մարզային կոմիտեյին և Միութենական Հանրապետության Կենտրոնական Կոմիտեյին:

54. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ու թեկնածուները օկրուգային, քաղաքային և շրջանային կոմիտեյի պլենումի և



նախագահության աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

## 8. ՄՈՊՐ-Ի ԲՋԻՋՆԵՐԸ

55. ՄՈՊՐ-ի կազմակերպության հիմնական օղակ հանդիսանում է ՄՈՊՐ-ի բջիջը: ՄՈՊՐ-ի բջիջներ ստեղծվում են ձեռնարկություններում, տրանսպորտում, հիմնարկներում, դպրոցներում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում, գյուղերում, բարձրագույն ուսումն. հաստատություններում, բնակվարձկալ ընկերություններում, հանրակացարաններում, կարմիր-բանակային զորամասերում և այլն, յեթե առկա յեն ՄՈՊՐ-ի առնվազն 3 անդամ:

ՄՈՊՐ-ի բջիջները ռեգիստրացիայի յեն յենթարկվում ըստ պատկանելույն ՄՈՊՐ-ի քաղաքային կամ շրջանային կոմիտեյի կողմից:

56. Խոշոր ձեռնարկություններում և հիմնարկություններում, ԲՈՒՀերում, խորհտնտեսություններում ՄՈՊՐ-ի բջիջներ կարող են կազմակերպվել ցեխերում, վարչություններում և բաժիններում, ֆակուլտետներում, խորհտնտեսության բաժանմունքներում և տեղամասերում՝ ՄՈՊՐ-ի համապատասխան քաղաքային, շրջանային կոմիտեյի հատուկ վորոշմամբ:

4781
39

Ցեխային բջիջները, բաժինների և վարչությունների, ֆակուլտետների, խորհտնտեսությունների տեղամասերի և այլ բջիջները յենթարկվում են համապատասխան համագործարանային կոմիտեյին, հիմնարկության, ԲՈՒՀ-ի, խորհտնտեսության և այլնի ՄՈՊՐ-ի կոմիտեյին:

57. Բջիջի ղեկավար օրգան հանդիսանում է ՄՈՊՐ-ի անդամների ընդհանուր ժողովը, վորը հրավիրվում է առնվազն յերկու ամիսը մեկ անգամ:

Բջիջի ընդհանուր ժողովն ընտրում է բջիջի բյուրո,—մեկ տարվա ժամկետով:

Ծանոթություն.—Բջիջում 10 անդամից պակաս լինելու դեպքում ընտրվում է միայն քարտուղար:

58. ՄՈՊՐ-ի բջիջի ընդհանուր ժողովը վարում է՝

ա) բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները լսելը և հաստատելը.

բ) բջիջի աշխատանքի պլանը քննարկելը և հաստատելը․
գ) նոր անդամների ընդունելությունը և հեռացումը ՄՈՊՐ-ի շարքերից․
դ) բջիջի բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի, ինչպես նաև ՄՈՊՐ-ի քաղաքային, շրջանային կոնֆերանսի պատգամավորների ընտրությունները։

59․ Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե բջիջի ընդհանուր ժողովին, ինչպես նաև ՄՈՊՐ-ի համապատասխան քաղաքային, շրջանային կոմիտեյին։

Վերստուգիչ հանձնաժողովը յուրաքանչյուր ամիս ստուգում է բջիջի գործունեյությունը և նրա ֆինանսական հաշվետվությունը։

## 9. ՄՈՊՐ-Ի ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

60․ ՄՈՊՐ-ի բոլոր որգանները—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը, միութենական հանրապետությունների ՄՈՊՐ-ի կենտկոմները, մարզային ու յերկրային կոմիտեները, օկրուգային, քաղաքային ու շրջանային կոմիտեները, բջիջների բյուրոները, վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են համապատասխան համագումարներում, կոնֆերանսներում և ժողովներում առաջ քաշված յուրաքանչյուր թեկնածության անհատական քննարկման հիման վրա։ Ընտրությունները կատարվում են գաղտնի (փակ) քվեարկությամբ։

61․ Համագումարների, կոնֆերանսների—համամիութենական, միութենական, յերկրային, մարզային, օկրուգային, քաղաքային և շրջանային—պատգամավորների ընտրությունները կատարվում են յուրաքանչյուր պատգամավորի թեկնածությունն առանձին-առանձին անհատաբար քննարկելու ճանապարհով։ Ընտրությունները կատարվում են գաղտնի (փակ) քվեարկությամբ։

## 10. ՄՈՊՐ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ

62․ ՄՈՊՐ-ի միջոցները կազմվում են՝
ա) անդամավճարներից և մուտքի վճարներից․
բ) չեֆական 10 կոպեկից․



գ) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի հրատարակչության շահույթների յեկամուտների սահմանված տոկոսի հատկացումներից․
դ) այլ մուտքերից։

63․ Այն բոլոր միջոցները, վոր հավաքում են ՄՈՊՐ-ի բջիջները, ամեն ամիս փոխադրվում են ՄՈՊՐ-ի յերկրային, մարզային կոմիտեներին և միութենական հանրապետությունների կենտկոմներին, վորոնք այդ միջոցները ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի սահմանած ժամկետներում ուղարկում են ԽՍՀ Միության ՄՈՊՐ-ի Կենտկոմին։

64․ ՄՈՊՐ-ի կազմակերպությունները միջոցներ ձեռք բերելու նպատակով չեն կարող ունենալ վորևէ տնտեսական կամ առևտրական ձեռնարկություններ։

## 11. ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

65․ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը լիկվիդացիայի կենթարկվի, յերբ սոցիալիզմի համաշխարհային հաղթանակի կապակցությամբ նրա կարիքը վերանա։

Լիկվիդացիայի կարգը սահմանվում է դրա վերաբերյալ վորոշմամբ։

# ՄՈՊՐ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի նախագահությունը* 1937 *թ· օգոստոսի* 22*-ի իր նիստում(արձանագրություն* №107)*, քննելով ՄՈՊՐ-ի կանոնադրության նախագծի հարցը, վորոշեց ՄՈՊՐ-ի կանոնադրության նախագծի մեջ մացնել հետևյալ փոփոխությունները և դրանք հիմնականում Կենտկոմի* VI *պլենումի հավանությունը ստացած նախագծի հետ մեկտեղ հանձնել տեղական կազմակերպությունների քննարկմանը·*

1· *«ՄՈՊՐ-ի նպատակներն ու խնդիրները»* I *հատվածում* 2*-րդ կետը փոփոխել հետևյալ կերպ·*

> *«Իրականացնելով իր ինտերնացիոնալ խնդիրները, ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը իր անդամներին դաստիարակում է սոցիալիզմի և սոցիալիստական հայրենիքին նվիրված լինելու վոգով և Խորհրդային Միության բոլոր հասարակական կազմակերպությունների հետ միասին ակտիվորեն մասնակցում է սոցիալիզմի շինարարությանը, ամրապնդելով Խորհուրդների յերկրի—ամբողջ աշխարհի պրոլետարների և ճնշված ժողովուրդների հայրենիքի—հզորությունը»։*

2· II *հատվածը վերնագրել՝ «ՄՈՊՐ-ի անդամները, նրանց իրավունքներն ու պարտականությունները»։*

3· II *հատվածի* 9*-րդ կետը փոփոխել հետևյալ կերպ·*

*«*9· *ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամ ունի հետևյալ իրավունքները·*

*ա) իր կազմակերպության ՄՈՊՐ-ի անդամների բոլոր ժողովներում վճռական ձայնի իրավունք;*

*բ) ՄՈՊՐ-ական կյանքի հարցերը ՄՈՊՐ-ի անդամների ընդհանուր ժողովների և ՄՈՊՐ-ի կոմիտեների վճռին ներկայացնելու իրավունք·*



*գ) ՄՈՊՐ-ի բոլոր օրգանների, կոնֆերանսների ու համագումարների անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք·*

*դ) ՄՈՊՐ-ի ընտրական ժողովներում ՄՈՊՐ-ի օրգանների կազմի թեկնածուներ առաջադրելու և առաջադրած թեկնածուների ամեն մի քանակություն բացարկելու իրավունք,*

*և հետևյալ պարտականությունները·*

*ա) կատարել ԽՍՀՄ քաղաքացու՝ ԽՍՀՄ Սահմանադրությամբ վորոշված պարտականությունները·*

*բ) պահպանել և ամրապնդել սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային իրավակարգի սրբազան և անձեռնմխելի հիմք·*

*գ) պարզաբանել ՄՈՊՐ-ի գաղափարներն ու խնդիրները,*

*դ) վճարել մուտքի վճար և անդամավճար այն չափով և այն ժամկետներին, վոր սահմանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կենտկոմը·*

*ե) ակտիվորեն մասնակցել կազմակերպության աշխատանքին, հաճախել ՄՈՊՐ-ի ընդհանուր ժողովները և կենսագործել դրանց վորոշումները·*

*զ) աջակցել ՄՈՊՐ-ի նոր անդամների ներգրավմանը·*

*է) խնամքով պահել անդամատոմսը, վորպես Հեղափոխության Մարտիկներին Օգնող Միջազգային Կազմակերպության (ՄՈՊՐ-ին) պատկանելու վկայագիր»։*

4· 10*-րդ կետը փոփոխել հետևյալ կերպ·*

*«*10· *ՄՈՊՐ-ի անդամությունից վտարում կատարում է բջիջի ընդհանուր ժողովը՝*

*ա) կանոնադրությունը խախտելու համար·*

*բ) դատարանի վճռով ընտրական իրավունքներից զրկվելու դեպքում·*

*գ) այն արարմունքների համար, վորոնք պարտավորում են նրան, վորպես ՄՈՊՐ-ի անդամի·*

*դ) ԽՍՀՄ քաղաքացու՝ Սահմանադրությամբ վորոշված պարտականությունները խախտելու համար·*

*ե) ՄՈՊՐ-ի անդամությունից վտարում կարող է կատարվել միայն ՄՈՊՐ-ի սկզբնական բջիջի ընդհանուր ժո-*

դովի վորոշմամբ, վորին ներկա չե ՄՈՊՐ-ի անդամների առնվազն յերկու յերրորդը, և անպայման վտարվողի ներկայությամբ:

Ծանոթություն.— Վտարվողն իրավունք ունի բջիջի ընդհանուր ժողովի վորոշման դեմ բողոքելու ՄՈՊՐ-ի վերադաս կոմիտեյին»:

5. 11-րդ կետը փոփոխել հետևյալ կերպ.

«11. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կազմակերպության կառուցվածքի ղեկավար սկզբունք հանդիսանում է դեմոկրատական ցենտրալիզմը: Այդ նշանակում է՝

ա) ՄՈՊՐ-ի մեջ մտնելու և նրանից դուրս գալու կամավորություն.

բ) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բոլոր օրգանների, այսինքն ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի, յերկրային, մարզային և հանրապետական կոմիտեների, օկրուգային, քաղաքային և շրջանային կոմիտեների, ՄՈՊՐ-ի բջիջների բյուրոների և համապատասխան վերստուգիչ հանձնաժողովների ընտրականություն վերևից մինչև ներքև.

գ) ՄՈՊՐ-ի կոմիտեների ու բջիջների բյուրոների սիստեմատիկ հաշվետվություն իրենց ընտրողների—ՄՈՊՐ-ի անդամների առաջ և ՄՈՊՐ-ի բոլոր օրգանների ու ՄՈՊՐ-ի պաշտոնատար ընտրովի անձերի պատասխանատվություն ՄՈՊՐ-ի անդամների առաջ.

ե) ՄՈՊՐ-ի բարձրագույն ղեկավար օրգանների վորոշումների պարտադրականություն ստորադաս օրգանների և կազմակերպության բոլոր անդամների համար:

6. 60 և 61-րդ կետերի փոխարեն ընդունել 15-րդ կետը հետևյալ խմբագրությամբ, համապատասխանորեն փոփոխելով կետերի համարները.

«15. ՄՈՊՐ-ի բոլոր ընտրական օրգանները ներքևից մինչև վերև ընտրվում են յուրաքանչյուր թեկնածուի առանձին փակ (գաղտնի) քվեարկությամբ, այն է՝

ա) բջիջների բյուրոների անդամները.

բ) ՄՈՊՐ-ի շրջանային, մարզային, յերկրային, հանրապետական կոնֆերանսների և համագումարների պատգամավորները.

գ) շրջանային, քաղաքային, օկրուգային, յերկրային,



մարզային կոմիտեների, Միութենական հանրապետությունների ՄՈՊՐ-ի կենտկոմների և ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի անդամները.

դ) վերստուգիչ հանձնաժողովների անդամները բոլոր ատյաններում.

ե) շրջանային, քաղաքային, օկրուգային, յերկրային կոմիտեների, Միութենական հարապետությունների ՄՈՊՐ-ի կենտ. կոմիտեների և ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի նախագահները, քարտուղարներն ու նախագահությունների անդամները համապատասխան կոմիտեների պլենումներում»:

7. 16-րդ կետի խմբագրությունը փոփոխել հետևյալ կերպ.

«16) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն ընտրվում է Համամիութենական համագումարի կողմից այն քանակով, վոր վորոշում է համագումարը, և հերթական Համամիութենական մեկ համագումարից մինչև մյուսն ընկած ժամանակամիջոցում հանդիսանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բարձրագույն օրգանը:

ՄՈՊՐ-ի Կենտկոմի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարի ընտրած թեկնածուների թվից, համագումարում ընտրվելիս նրանց ստացած ձայների մեծամասնության կարգով:

ՄՈՊՐ-ի Կենտկոմի անդամության թեկնածուները Կենտկոմի պլենումներին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով:

Ծանոթություն.— 1. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմը միաժամանակ հանդիսանում է ՌԽՖՍՀ ՄՈՊՐ-ի Կենտկոմ:

Ծանոթություն.—2. ՄՈՊՐ-ի Կենտկոմի անդամներն ու թեկնածուները և Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վորոնք համագումարի պատգամավոր չեն ընտրված, համագումարին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով»:

ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի կենտկոմի նախագահ՝ Յե. ՍՏԱՍՈՎԱ

Խմբագիր Ս. Բաղդասարյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր № 2006, հրատ. № 515, Պատվեր № 230,
Տիրաժ 1000

Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան
NL0200661

ПРОЕКТ УСТАВА

Международной Организации Помощи Борцам Революции (МОПР), Секция СССР

---

Издание ЦК МОПР Арм. ССР, Ереван, 1937